ԱՅԼ ԵՒ ԱՅԼ

ՀՍԿԱՅԱԶԵՒ ԱՐՁԱՆ ՄԻ. — Յովհաննէս Դոնոկ ամերիկացի քանդակագործն յամին 1890 ի Հռովմ գտուելով, յանկարծ իւր մտաց մէջ գաղափար մ'ունեցաւ Քիկագոյի աշխարհահանդիսին առթիւ Ոգի անուամբ վիթխարի արձան մի շինել։ Սակայն իւր այս գաղափարը իրագործելու համար կը կարօտէր նա ընդարձակ արուեստանոցի մը, զոր և կրցաւ գտնել իւր բարեկամաց միջնորդութեամբ՝ նոյն իսկ Դիոկղետիանոսի Ջերմանկներու պալատին մէջ։ Հոս՝ նախ հինգ կարգ բարձրութեամբ կազմած մի կանգնել տուաւ, և ապա յիսուն մեծ տակառաչափ սպիտակ և զուտ գաճ բերել՝ տուաւ, կաղապարն ձեւացնելու համար։ Երկու տարի աշխատելէն յետոյ արձանն տարտեցաւ։ Այն ժամանակ Դոնոկ իսկոյն յերեւան հանեց իւր ձեռակերտն ի ցոյց Հռովմայ արուեստաւորաց և հասարակութեան, որք յիրաւի հիացան նորա հրաշալի չափակցութեան և անհամեմատ գեղեցկութեան վերայ։ — Փոխադրութեան համար հարկ եղաւ զայդ մեռտասան հատուածներու բաժնել և առանձին նաւի մը վերայ դնել՝ որ և ղրկուեցաւ յատուկ Նիւ-Եորքէն։ Փոխադրութիւնն տասն հազար փռանկի եղաւ։ Սակայն կառավարութեան հանած ելեւմտական գժուարութեանց պատճառաւ քանդակագործն չի կրցաւ Աշխարհահանդիսի գեղարուեստից պալատը մուցընել զայդ։ Առանց իւր պատուանդանին՝ Ոգի արձանն հազար հաղարագրամի ծանրութիւն ունի։ Բարձրութիւնն կը հասնի 12 մետրի, 22,50 մետր՝ հաշուելով խարիսխը։ Նա կը ներկայացնէ թեատրական հրեշտակ մի, որոյ բացուածքը ծայրէ ի ծայր չափելով 13 մետրէն աւելի է։ Թեւերն 2,40 մետր չրջապատ ունին։ Ոտքերն 1,65 մետր երկայնութիւն, և ոտքի բթամատն մարդոյ գլխէն քիչ մը աւելի մեծ է։ Իսկ պատուանդանն կը բաղկանայ 15 մետր տրամագծով միւսիոնադարդ-քարեղէն ահագին կիսագնտէ մի։ Արուեստաւորն հաշուած է՝ որ սոյն արձանս պղնձէ շինելու համար՝ հարկ է ծախսել 500000 փռանկ։ Յովհաննէս Դոնոկ Պարիսու գեղարուեստից դպրոցին հին աշակերտներէն մին եղած է։

*
* *

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ՀԱՅԱԹՂԹՈՑ. — Հայաթուղթն՝ որ այժմ շատ կը գործածուի բնակարանաց մէջ՝ իբրու հանեխական ծխանելի, այսպէս կը պատրաստուի.

Ի՝ առնուն առանց օսլայի թուղթ, օրինակի համար մգելու թուղթը, և կը թրմին աղրորակի յաւելաւ պաղ լուծման մէջ. յետոյ կը ցամքեցընեն տաքածելով ոլորտաբար ձգուած չուաներու վրայ։ Այս պատրաստութեանս նպատակն է՝ թղթոյն լուցկիի նման սպառուող յատկութիւն տալ։ Այս գործողութենէն ի վերջ՝ թուղթը բուրոցական ընելու համար, գարձեալ կը թրմին քացախական լուծման մէջ, բաղկացած հոտաւէտ իսկութիւններով, խիժերով և բալասաններով. այլ լուծմանս բաղկացուցիչ այս նիւթոց տեսակն և չափը կրնայ փոփոխուիլ, ստանալ ուզուած արդեան համեմատ։

Ահա հոս դնենք երկու տարբեր այս քացախական լուծմանց.

digitised by A.R.A.R.@

ա. Քացախ	300	դրամ
Մուշկ	10	»
Կնդրուկ	110	»
Զմուռս	12	»
Հիրիկ Փլորենտիոյ .	250	»
բ. Քացախ	200	»
Կնդրուկ	80	»
Բալասան Ցոլուայ .	20	»
Ստաշխ (storax) . .	20	»
Ճանդան (bois de santal)	20	»
Զմուռս	10	»
Ելեմիերակեղեւ (cascarille)	20	»
Մուշկ	1	»

Այսպէս լուծումը կը թողուն ամենով չափ որ հանգչի և մրուրն ի յատակ իջնէ, և ապա կը մղեն, և կը գործածեն բուրոդական հայաթուղթ շինելու։

*
* *

Ց'ԱՐԴ ԽՄԲՈՒԱԾ ԱՇԽԱՐՀԱՀԱՆԴԷՍ — Հետեւեալ հաշուական ցուցակը կազմած է պր. Ռ. Լուդերս Գոբլից ի մասին ց'արդ խմբուած ինն համաշխարհական հանդիսից.

ա. Աշխարհահանդէս Լոնդոնի, յամի 1851. — Ցարածութիւնն էր 8½ հեկտար (85,000 քառ. մետր), և տեւեց 144 օր. ունեցաւ 17,000 հանդիսադիր (expositeur) և 6,030,000 այցելու։

բ. Աշխարհահանդէս Պարիսի, յամի 1855. — Ցարածութիւնն էր 10 հեկտ. (100,000 քառ. մ.), և տեւեց 200 օր. ունեցաւ 21,779 հանդիսադիր և 5,162,000 այցելու։

գ. Աշխարհահանդէս Լոնդոնի, յամի 1862. — Ցարածութիւնն էր 9 հեկտ. (90,000 քառ. մ.), և տեւեց 171 օր. ունեցաւ 28,653 հանդիսադիր և 6,211,000 այցելու։

դ. Աշխարհահանդէս Պարիսի, յամի 1867. — Ցարածութիւնն էր 15 հեկտ. (150,000 քառ. մ.), և տեւեց 217 օր. ունեցաւ 50,236 հանդիսադիր և 10,200,000 այցելու։

ե. Աշխարհահանդէս Վիեննայի, յամի 1873. — Ցարածութիւնն էր 16 հեկտ. (160,000 քառ. մ.), և տեւեց 186 օր. ունեցաւ 42,000 հանդիսադիր և 7,254,000 այցելու։

զ. Աշխարհահանդէս Փիլադելփիոյ, յամի 1876. Ցարածութիւնն էր 24 հեկտ. (240,000 քառ. մ.), և տեւեց 190 օր. ունեցաւ 60,000 հանդիսադիր և 9,000,000 այցելու։

է. Աշխարհահանդէս Պարիսի, յամի 1878. — Ցարածութիւնն էր 24 հեկտ. (240,000 քառ. մ.), և տեւեց 194 օր. ունեցաւ 32,000 հանդիսադիր և 13,000,000 այցելու։

ը. Աշխարհահանդէս Պարիսի, յամի 1889. — Ցարածութիւնն էր 30 հեկտ. (300,000 քառ. մ.), և տեւեց 188 օր. ունեցաւ 60,000 հանդիսադիր և 32,000,000 այցելու։

թ. Աշխարհահանդէս Քիկագոյի, յամի 1893. — որոյ դեռ եւս որոշակի ծանօթ չեն մանրամասնութիւնք։

digitised by A.R.A.R.@